ԱՐՈՒՃԻ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Բ. Լ. ՍԱՐՈՅԱՆ

Պատմական Արագածոտնի Արուճ գյուղաքաղաքի (այժմ Աշտարակի շրջանի Արուճ գյուղ) տարածքը և մերձակայքը բնակեցվել են սկսած մ. թ. ա. III հազարամյակից։ Բնակությունն այստեղ հարատևել է նաև ուրարտական և անտիկ ժամանակաշրջաններում։ Սակայն այս տարածքում առավել հաճախ հանդիպում են IV—XVII դդ. վերաբերող պաշտամունքային, մեմորիալ, աշխարհիկ և պաշտպանական կիրառության հուշարձաններ։ Միջնադարյան հուշարձանների առատությունը ուղեկցվում է բազմաթիվ գրավոր և վիմագիր հիշատակություններով, հնարավորություն ընձեռելով պարզել Արուճի պատմական զարգացման փուլերը։

Արուճի մասին հայ մատենագրության մեջ վաղագույն տեղեկությունը հաղորդում է Եղիշեն։ Վասակ Սյունու և նրա կողմնակիցների կողմից 451 թ. ավերած արքունի ձմեռոց-զորակայանների թվում պատմիչը հիշատակում է նաև Արուճը։ Եղիշեն գրում է. Վասակը «յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զօրացն էին, զԳառնին և զԵրամունս և զԴրասխանտակերտն՝ զմեծ դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական. զՓառախոտն, զՍարդեանսն, զՁողակերտն աւան և զբերդն Արմաւրի. զԿոշն աւան, զԱրուճն, զԱշնակ և զամենայն գեղս և զաւանս, որ շուրջ զնովաւ էին, առեալ, աւերեալ եւ հրձիգ արարեալ...»[1]։

Արագածոտն գավառը պատկանել է Արշակունիներին[2] և ըստ Եղիշեի ու Փավստոս Բուզանդի տեղեկությունների արքունի զորքերի կենտրոնացման վայր էր[3]։ Եղիշեի հիշատակած արքունի զորակայան-ձմեռանոցները պետք է որ կառուցված լինեն Արշակունի արքաների կողմից III—IV դդ. կամ էլ օգտագործված լինեն ավելի վաղ շրջանից պահված պաշտպանական կառույցները (ինչպես՝ զբերդն Արմաւրի)։ Զորակայան լինելուց բացի, վերը նշված ամրոցներից առնվազն չորսը (Օշական, Կոշ, Արուճ, Աշնակ) պաշտպանում էին դեպի Սև ծովի ափը տանող հնագույն ճանապարհը[5], իսկ Փառախոտն ու Ձողակերտը (Ցոլակերտ), ըստ Պեվտինգերյան քարտեզի, Արտաշատ—Սատաղ ճանապարհի կայաններից էին[6]։

---

1 Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 78—79։

2 Ս. Երեմյան. Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 38։ Հատկանշական է, որ Արագածոտնում իրավունք ունեին բնակվելու միայն արքան, գահաժառանգը և արքայահայրը (ինչպես Տիրան արքայահայրը՝ Կուաշ, Կոշ ավանում). Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1981, էջ 260։

3 Եղիշե, էջ 79։ Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն. Երևան, 1947, էջ 95—97։

4 Եղիշեի հիշատակածներից Կոշը, Օշականը և Գառնին որպես բերդ նշվում են Խորենացու և Փավստոս Բուզանդի կողմից IV դարի դեպքերի հետ կապված. տե՛ս Խորենացի, էջ 260։ Բուզանդ, էջ 95—97։

5 Ս. Երեմյան. Մեծ Հայքի թագավորությունը 4-րդ դարում, ուսումնական քարտեզ. Երևան, 1979։

6 Հ. Մանանդյան. Հին Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պեւտինգերյան քարտեզի. Երևան, 1936։

Ըստ միջնադարյան «Զորանամակի», արքունիքի անմիջական իրավասության տակ էր գտնվում մոտ 20 հազարանոց մի զորաբանակ[7], որի մի մասը պահվում էր արքունի ամրոցներում՝ որպես կայազոր, իսկ մյուս մասը՝ զորակայաններում։ Արքունական այդ զորքը ենթակա էր սպարապետին։ Եղիշեի և Փարպեցու տեղեկություններից երևում է, որ մարզպանական շրջանում ևս հիշյալ ամրոցները մշտական և սպարապետին ենթակա կայազոր են ունեցել, որոնց շեղոքացումը, Վասակ Սյունու ծրագրով, անհրաժեշտ էր։ Սակայն այս մասին ավելի հավանական է թվում Ղազար Փարպեցու տեղեկությունը[8], ըստ որի, Վասակը ոչ թե ավերել ու հրդեհի ճարակ է դարձրել վերը նշված զորակայանները (ինչը մեծ զորական ուժ ու անխուսափելի կորուստներ կպահանջեր), այլ իր իշխանության ուժով փոխել է կայազորը՝ իրեն հավատարիմ զինվորականներ նշանակելով։

Արուճի հուշարձանների ուսումնասիրությունները մինչև օրս տվյալներ չէին տվել վերոհիշյալ զորակայանի մասին։ Բացի այդ, Արուճի հուշարձանները ուսումնասիրողները նվազ ուշադրություն են դարձրել Արուճ գյուղի տարածքում գտնվող ամրաշինական կառույցներին, համարելով, որ դրանք ուշ շրջանում են կառուցված. ինչ վերաբերում է Արուճի VII դարի նշանավոր տաճարին և պալատական կառույցներին, ապա դրանք արդեն դարձել են հատուկ հետազոտության առարկա[9]։ Զգացվում էր նաև Արուճի պաշտպանական կառույցների հետազոտության անհրաժեշտությունը։

1979 թ. կատարված դաշտային հետազոտություններից պարզվեց, որ այս տարածքում պահպանվել են հղոր պարսպի հետքեր։ 1980—81 թթ. պեղումներով[10] բացվեց այս պաշտպանական կառույցի մի հատվածը՝ հնարավորություն տալով որոշակի պատկերացում կազմել հուշարձանի կառուցման ժամանակի, տեխնիկայի և շերտագրության, նաև պաշտպանական նշանակության մասին։

Հուշարձանը գտնվում է Արուճի եկեղեցուց և պալատական համալիրից մոտ 200 մետր դեպի հարավ-արևմուտք։ Պարսպի արևմտյան հատվածը, որն ուղղությամբ համընկնում է ուշ ժամանակաշրջանի դղյականման կառույցի արևմտյան պատի ուղղությանը[11], կառուցված է զառիթափ ձորակի եզրին, իսկ բացված մյուս հատվածը՝ հարավայինը, ուղիղ անկյամբ, այգիների եզրով շարունակվում է ձորակից դեպի արևելք։ Հուշարձանի ամբողջ տարածքը դարասկզբին բնակելի է եղել։ 1960-ական թթ. բնակիչներից շատերն այստեղից տեղափոխվել են, թողնելով կանգուն և կիսավեր բազմաթիվ շինություն-

---

7 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 283—284. Տե՛ս նաև Ղևոնդ Ալիշան. Այրարատ. Վենետիկ, 1890։ Նշված քանակի մեջ չի մտնում Մարզպետական զորքը

8 Ղազար Փարպեցի. Հայոց պատմություն. Երևան, 1982, էջ 156։

9 Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942 և հ. 2, 1948։ Միքայել Հովհաննեսյան. Հայաստանի բերդերը. Վենետիկ, 1970, էջ 782—783։ Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս գիտ.), 1953, № 8։ Նույնի՝ По поводу датировки храма в Аруче. Ереван, 1946; Н. Токарский. Архитектура Армении в IV—XIV вв. Ереван, 1946, с. 38—72; Марио д'Онофрио. Несколько армянских дворцов V—VII вв. (II Международный симпозиум по армянскому искусству). Ереван, 1978.

10 1980—81 թթ. պեղումները Արուճում կատարվել են Երևանի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնի հնագիտական արշավախմբի կողմից, տողերիս հեղինակի ղեկավարությամբ։ Պեղումների մասին մանրամասն հաշվետվությունը տե՛ս Շամիրամի հնագիտական արշավախմբի 1980, 1981 թթ. միացյալ հաշվետվությունում (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության արխիվ)։

11 Այս պատի մեջ, որը հիմնովին վերակառուցվել է 1514 թ., երկու տեղ երևում են վաղագույն պարսպի հատվածներ՝ պահպանված 1-ից 3 շարքի բարձրությամբ։

ներ։ Այս կառույցները և տարածքի ներկայիս բնակելի տները մեծապես խանդարեցին պեղումներին և այդ է պատճառը, որ մոտ 250 մետր երկարությամբ ճշտված վաղագույն պարսպից պեղվեց մոտավորապես կեսը (տե՛ս գծ. 1)։

Պարսպի հարավային հատվածին զուգահեռ, նրանից 20—25 մետր դեպի հարավ, ձգվում է երկրորդ պարիսպը, հատակագծում կիսակլոր բուրգերով, որոնցից մեկը երևում է բնակելի տան բակում, պահպանված 4 շարքի բարձրությամբ (120—130 սմ)։ Շարքի քարերի մշակումը, չափերը, շարվածքի



Գծ. 1



Գծ. 2

տեխնիկան և աշտարակի ձևը հիմք են տալիս ենթադրելու, որ արտաքին այս պարիսպը համեմատաբար ուշ ժամանակի կառույց է և կարող է վերաբերել Բագրատունիների Արուճում ծավալված շինարարական գործունեության ժամանակաշրջանին՝ IX—X դդ.։

Վաղագույն պարիսպը շարված է տուֆի բլոկներից, որոնց չորս կողմերը և արտաքին մակերեսը սրբատաշ են, ներսի կողմը՝ չտաշված և ունեն երկայնական եզրակոսներ. այնպես որ պարիսպը թե՛ դրսից և թե՛ ներսից սրբատաշ է, ստորին շարքը պատի երկու կողմից էլ 8—10 սմ առաջ է դրված՝ հիմնախարիսխ (ցոկոլ) առաջացնելով, որը տեղ-տեղ հարմարեցված է տեղանքին և 15-ից մինչև 50 սմ փոփոխվող բարձրություն ունի։ Շարքի քարերի բարձրությունը 48—50 սմ է, իսկ երկարությունը տատանվում է կես մետրից մինչև 120 սմ-ի սահմաններում։ Պարսպի հաստությունը 1,8—2,0 մետր է, որի մոտ կեսը կազմում է երկու կողմից դրված քարերի հաստությունը (մոտ 90 սմ), իսկ մյուս կեսը՝ կրաշաղախ և արտակարգ ամուր լիցքը, տուֆի և որձաքարի անկանոն բեկորներով, լավ շաղկապված քարերի անհարթ մակերեսի հետ։

Պարսպի բացված հատվածից լրիվ կամ կիսով չափ[12] պեղվել է 5 աշտարակ, մեկն էլ գտնվում է բնակելի տան օժանդակ կառույցի պատի մեջ (գծ. 1, 4ա)։ Աշտարակները քառակուսի են, ներքուստ 4×4 մետր չափերի, բոլոր պատերը հիմնախարսխի վրա են դրված։ Հիմք է հանդիսանում տեղ-տեղ հողի լիցքով հարթված ժայռը։ Աշտարակի առանցքը դրված է պարսպի ներսի հարթությանը հավասար, դեպի ներս ընկած պատերը ավելի բարակ են, ի հաշիվ լիցքի թանձրության պակասեցման։ Աշտարակներից երկուսում (գծ. 1, 1բ և 1գ) ներսից, արևելյան կողմից, մուտք է բացվել։

Պարսպի տարածքում պեղվել է երկու հատված, ընդհանուր առմամբ մոտ 100 մետր երկարությամբ և մոտ 5 մետր լայնությամբ։ Պահպանվել է չորս հնագիտական շերտ։ Դրանցից վերինը խիստ վնասված է ժամանակակից կառուցապատումով, ընդհանուր առմամբ IX—XIV դդ. թվագրվող միջին երկու շերտը լավ են պահպանված, իսկ ստորին շերտից միայն մի տեղում, արևմտյան պարսպից մոտ 5 մետր դեպի արևելք 1բ և 1գ բուրգերի միջև, բացվեց

12 Կիսով չափ են պեղվել 1ա (անկյունային) և 2ա բուրգերը (գծ. 1), այստեղ գտնվող ժամանակակից կառույցների պատճառով։

տեղում ջարդված կարասների մի շարք[13], գորշ, անփայլ մակերեսով, սպիտակ աստառով, մեծահատիկ, բայց լավ մշակված կավից, խիստ բնորոշ զարդապատկերներով՝ իրար զուգահեռ, ուռուցիկ, ուղղահայաց գծազարդով գոտիներ իրանի և վզի մասում և դրանց միացնող, նույնատիպ, թեք գոտիներ միջին մասում։ Այս տիպի խեցեղեն հայտնի է ուշ անտիկ և վաղ միջնադարյան վերջերս պեղված մի քանի հուշարձաններից, ինչպես Շիրակավանը, Ջրափին, Մաստարայի պաշտպանական համակարգը և Կաթնաղբյուրի ամրոցը[14], որոնք գտնվում են Արագածոտնի և Շիրակի տարածքում։

Պարսպի կառուցվածքը և ճարտարապետական առանձնահատկությունները թույլ են տալիս այն թվագրել վաղ միջնադարով՝ IV—VII դարերով, քանի որ VII դարից հետո այլևս չեն օգտագործվում քարերի հորիզոնական եզրակոսներ, քարերի չափերը փոքրանում են, հատկապես հաստությունը, և եթե զարգացած կամ ուշ միջնադարում պաշտպանական կառույցների պատերը մեծ թանձրություն են ունենում, ապա միայն ի հաշիվ պատի լիցքի հաստության, երբ արտաքին շարվածքը հիմնականում միայն երեսպատման դեր է կատարում։ Արուճի պարիսպների կառուցման տեխնիկան, որը գալիս է ուշ անտիկ շինարարական ավանդույթներից[15], վաղ միջնադարյան Հայաստանում լայնորեն կիրառվում է տուֆի առկայության շնորհիվ։ Պարսպի վաղ միջնադարյան լինելու ապացույց են նաև քառակուսի աշտարակները՝ շարված իրարից որոշակի հեռավորության վրա (17—18 մ)։ VII դարից այս կողմ Հայաստանի տարածքի ամրաշինական կառույցներում բուրգերը կառուցվում են կիսակլոր կամ $^3/_4$ շրջան հատակագծով (Ամբերդ, Բջնի, Ժիղնիս, Մաղասաբերդ, Փոքր Թալին, Կոշ, Արուճի արտաքին պարիսպ և այլն), իսկ վաղ միջնադարյան ամրոցաշինությունից կարելի է նշել երկու օրինակ, երբ աշտարակները քառակուսի են, սրբատաշ քարերով շարված[16], թեև ոչ սնամեջ[17]։ Դրանք են՝ Զվարթնոցի և Անիի VII դարում կառուցված պարիսպները։ Հետազոտվող պարիսպը որոշակիորեն մերձենում է Հռոմեական կայսրության շրջանի ամրոցաշինական ավանդույթներին։ Քառակուսի, սնամեջ, կանոնավոր տեղադրված բուրգերով, անկյունային բուրգերի կառուցման ձևով, հատակագծման կանոնավորությամբ և ամփոփվածությամբ այն զարգացումն է հռոմեական «կաստելում»-ների (տե՛ս գծ. 2), որոնք զինակայան-ճամբարներ էին և որոնց ձևը ծագում էր լեգեոնների մարտական ճամբարներից[18]։

Մնում է սակայն այն հարցը, թե IV—VII դդ. ընթացքում ե՞րբ է կառուցվել այս պարիսպը։ Այդ դարերում Արուճում երկու շինարարական շրջան է հայտնի, մեկը՝ զորակայանի կառուցումը Արշակունիների օրոք, մյուսը՝ եկեղեցու և պալատական համալիրի կառուցումը Գրիգոր Մամիկոնյանի կողմից։ Խոսելով հայոց իշխանի ծավալած շինարարական գործունեության մասին, Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ նորակառույց պալատը և եկե-

---

13 Այս կարասների շարքը մինչև վերջ չպեղվեց, քանի որ այն մտնում էր ժամանակակից տան պատի տակ։

14 Տե՛ս Հայկական ՍՍՀ-ում 1979—80 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցման թեզիսներ. Երևան, 1981։ Հայկական ՍՍՀ-ում 1981—82 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ. Երևան, 1983։

15 Витрувий. Десять книг об архитектуре. М., 1936, с. 51; Всеобщая история архитектуры в XII тт. (ВИА). Т. II, М., 1973, с. 489—490.

16 Մի շարք ամրոցներում, որոնք ցիկլոպյան (անկրաշաղախ) շարվածք ունեն, սակայն վաղ միջնադարում գոյատևել են որպես ամրոց, աշտարակները նույնպես քառակուսի են (Մաստարայի պաշտպանական համակարգի երեք ամրոցներ, Գառնահովտի ամրոցներ և այլն)։

17 Ըստ Պրոկոպիոս Կեսարացու, Հուստինիանոս կայսեր օրոք առաջին անգամ խախտվեց այդ կարգը և Պետրա (Ցիխիսձիրի) քաղաքի մուտքի աշտարակները հոծ կառուցվեցին։ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին մատենաշար. Պրոկոպիոս Կեսարացի. Երևան, 1967, էջ 120։

18 ВИА, т. II, с. 494, 509.

ղեցին պարսպապատվել են. «Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգեալ է տուն բնակութեան իւրոյ»[19]։ Պալատի շուրջը պարսպի հետքեր չեն հայտնաբերվել, միայն ըստ հնաբնակների տեղեկությունների[20] դարասկզբին, համալիրից արևելք, ձորակի եզրին, պահպանված են եղել սպատի մնացորդներ։ Չի բացառվում, որ քառակուսի բուրգերով պարիսպը Գրիգոր իշխանի կառուցած պարսպապատի մի հատվածը լինի[21], սակայն որոշ հանգամանքներ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այս կառույցը Եղիշեի հիշատակած արքունի զորական-ձմեռանոցն է՝ կառուցված III—V դդ.։

Նախ այն, որ ձորեզրին կառուցված դղյականման շինության հյուսիս-արևմտյան արտաքին անկյան՝ վաղ միջնադարյան պարսպի ստորին երեք շարքերը հիմնախարիսխ ունեն թե՛ դիմացից և թե՛ հյուսիսային կողմից, ինչը նշան է այս կետում պատի ավարտի կամ բուրգի առկայության։ Սակայն նույն պատի մեջ, նույն հարթության վրա պահպանված վաղագույն պարսպի երկու այլ հատվածներ անհավանական են դարձնում այստեղ բուրգի առկայությունը տեղ չլինելու և ժայռի ռելիեֆին հարմարվելու պատճառով։ Այս երկրորդ անկյունը ամփոփում է պարիսպը և ենթադրել է տալիս, որ գործ ունենք մոտ 1,5 հեկտար տարածությամբ պաշտպանական կառույցի հետ։

Արուճի պարիսպը իր կառուցվածքով և քարերի չափերով հին է թե՛ Զվարթնոցի և թե՛ Անիի նշված պարիսպներից։ Պարսպի վրա ոչ մի տեղ վարպետի նշաններ չեն հայտնաբերվել, մի բան, որը բնորոշ է IV դարին, քանի որ վարպետի նշանները հանդես են գալիս V դարից սկսած և պատատիր դառնում VI—VII դդ.։

Կառույցի ոչ այնքան անառիկ դիրքը, որ բնորոշ չէ Հայաստանի ամրաշինության մինչ օրս հայտնի օրինակներին, պետք է ինչ-որ կերպ փոխհատուցվեր նախ՝ իր հզոր պաշտպանական համակարգով, կանոնավոր և կուռ կառուցվածքով և ապա՝ մեծաքանակ զորական ուժի առկայությամբ, ինչը ամբողջովին համապատասխանում է արքունի զորքերի զորակայանի դերին ու նշանակությանը։

Կատարված աշխատանքի հսկա ծավալը և կառուցման որակը, VII դարում կառուցված եկեղեցուց և պալատից ունեցած հեռավորությունը գալիս են լրացնելու վերը նշված փաստարկները և հնարավոր են դարձնում ենթադրել, որ պեղումներով հայտնաբերված պարիսպը մասն է Եղիշեի հիշատակած Արշակունյաց զորակայանի, որն առայժմ միակն է Հայաստանի տարածքում ի հայտ եկածներից։

Արուճի մասին մեկ այլ վկայություն է պահպանվել VII դարի սկզբից, Հայոց Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի՝ 608 թ. հայ ժողովրդին և հոգևորականությանն ուղղված շրջաբերականում[22]։ Այս վկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ VI—VII դդ. Արուճի տարածքում եկեղեցի է գոյություն ունեցել՝ կառուցված Արուճի այժմ կանգուն եկեղեցուց առաջ։

1950-ական թթ. սկզբներին, Վ. Մ. Հարությունյանի ղեկավարությամբ կատարված Արուճի համալիրի պեղումների ընթացքում[23], Կաթողիկեից մոտ 60 մետր դեպի հարավ-արևելք, բացվել է IV—VI դդ. բնորոշ միանավ մատուռ, որն իր ոճով և կառուցման տեխնիկայով առանձնանում է VII դարով թվագրվող եկեղեցուց և պալատական կառույցներից։ Չևով և չափերով նման համաժամանակյա մատուռներ կան նաև այլ վաղ միջնադարյան եկեղեցինե-

---

19 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց. Թիֆլիս, 1913, էջ 91։

20 Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 58։

21 Ցայսոր, տարածքի կառուցապատումը և մասամբ բնակելի լինելը առայժմ անհնար է դարձնում պարսպի հետագա պեղումը։

22 Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 151։ Հիշատակվում է Արուճի «Վանից երեց» Գրիգորիսը։

23 Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 57։

րի՝ Քասաղի բազիլիկայի, Զվարթնոցի և Թալինի տաճարների կողքին, ժամանակով նախորդելով նրանց և, գուցե, կանխորոշելով վերը նշված եկեղեցիների կառուցումը այդ տեղերում։ Չի բացառվում, որ այս մատուռը մասը կազմած լինի Արուճում VI դարի վերջին—VII դարի սկզբին գոյություն ունեցած եկեղեցական համալիրի։

Սեբեոսի վկայությամբ, 654 թ. Հայաստանի առաջին արաբ նվաճող Հաբիր Իբն-Մասլաման առժամանակ հաստատվում է Արուճում[24]։ Սեբեոսը հիշատակում է, որ Հաբիրն այստեղ նահատակեց Արտավազդ Դիմաքսյան իշխանին։

Նույն թվականի վերջին հայոց իշխան է ընտրվում Համազասպ Մամիկոնյանը. ըստ երևույթին, իր կառավարման յոթ տարիների ընթացքում նրա նստավայրը Արուճն էր[25]։ Սակայն սկզբնաղբյուրներում տեղեկություն չի պահպանվել նրա շինարարական որևէ գործունեության մասին։ 661 թ. Հայոց իշխանությունը և նստավայր Արուճը ժառանգել է Գրիգոր Մամիկոնյանը (661—685), որն իր երկարատև և համեմատաբար խաղաղ իշխանության տարիներին Արուճը դարձրել է Հայաստանի քաղաքական և հոգևոր կենտրոններից մեկը։ Գրիգոր Մամիկոնյանի մեծածավալ շինարարական աշխատանքի մասին առաջինը հիշատակում է այդ ժամանակաշրջանին պատմականորեն ավելի մոտ կանգնած Ղևոնդ պատմագիրը։ Նա նշում է Արուճի տաճարի կառուցման մասին, ասելով. «Եվ շինեաց նա տունն աղօթից ի զաւառն Արագածոտին ի յաւանն Արուճ, տաճար փառաց անուան տեառն գեղեցիկ վայելչութեամբ...»[26]։ Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով Գրիգոր Մամիկոնյանի գործունեության մասին, հիշատակում է նաև Արուճում կառուցած պալատի մասին։ Պատմիչը գրում է. «Զայսու ժամանակաւ բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին, որ ի դաստակերտին Արուճ՝ շինէ զնա ստիպով, երկնային իմն ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի։ Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիս իւր յեզր քարաժայռ ձորակին, յորում բղխէ ականակիր աղբիւր պղպջակեալ ընդ քարաձերպո վիմարդ քարացն, որ զեզրս ունի իբրև զպսակ պատուարի»[27]։

Արուճում հայոց իշխան Գրիգոր Պատրիկ Մամիկոնյանի կատարած կառուցումների մասին հիշատակում են նաև Ասողիկը, Սամվել Անեցին, Մովսես Կաղանկատվացին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշները[28]։ Դրանց վկայությունն է նաև Արուճի Կաթողիկե եկեղեցու արևելյան պատին, խորանի կենտրոնական լուսամուտի տակ զետեղված շինարարական արձանագրությունը, որով զբաղվել են մի շարք հետազոտողներ։

Հիմքեր կան ենթադրելու, որ Գրիգոր Մամիկոնյանը, ունենալով կենտրոնացված և ուժեղ իշխանություն, միաբան լինելով աշխարհիկ և հոգևոր պետե-

---

24 Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն. Երևան, 1939, էջ 152։ Սեբեոսը գրում է. «...Հաբիրն անուանեալ գաւրավարի, որ նստէր յԱրուճ Աշնակի»։ Սա մի կողմնակի ակնարկ է մեկ այլ Արուճի գոյության մասին, սակայն որ Սեբեոսի նշածը հենց հետազոտվող Արուճն է, կասկած չի հարուցում նախ՝ որպես նստավայր Մամիկոնյան եղբայրների կողմից ժառանգվելու պատճառով, ապա և «Արուճ Աշնակի» բնորոշման պատճառով. Աշնակը բնակավայր է Արուճից ոչ հեռու (այժմ Թալինի շրջանում), պահպանել է իր վաղագույն անունը և հիշատակվում է Արուճի հետ նաև V դարում, որպես զորակայան (տե՛ս ծան. 1)։ Մյուս Արուճը, ըստ Մանանդյանի (նշվ. աշխ., էջ 26), գտնվում է Կոգովիտ գավառում, Դվին—Բագավան «պողոտայի» վրա։ Այս երկու Արուճները, որպես առանձին վանական կենտրոններ, հիշատակվում են նաև «Գիրք թղթոց»-ում (էջ 151)։

25 А. Тер-Гевондян. Армения и арабский халифат. Ереван, 1977, с. 49—51.

26 Պատմութիւն Ղևոնդայ մեծ վարդապետի Հայոց. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 15։

27 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 91։

28 Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 99։ Սամուէլի քահանայի Անեցւոյ Հավաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 84։ Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի. Երևան, 1963, էջ 153։ Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1909, էջ 62։

լրի հետ, ջանացել է հնարավորին չափ վերականգնել հայոց կորսված անկախությունը և անգամ արքայական իշխանության ավանդույթները՝[29] իր իշխանությանը փայլ ու շուք հաղորդելով։ Դրա ապացույցն են Արուճի Կաթողիկե և Եղվարդի Զորավոր եկեղեցիների, Արուճի պալատի և պաշտպանական համակարգի կառուցումը, Զվանշիր իշխանին նույն Արուճում արքայավայել շուքով ընդունելը[30], Գրիգոր Լուսավորչի մասունքները Դարանաղիի Թորդան գյուղից Այրարատ՝ Զվարթնոց եկեղեցին տեղափոխելը[31] և, վերջապես, իր աթոռանիստը Արշակունյաց ոստան Արագածոտնում հիմնելը[32]։ Կարծում ենք պատահականորեն չէ, որ Հովհաննես Դրասխանակերտցին Արուճի պալատը «արքունիք» է անվանել[33]։

Գրիգոր Մամիկոնյանի կատարած այս կառուցումները անհամեմատ մեծ չափով են արժանացել հետազոտողների ուշադրությանը, հատկապես 661—66 թթ. կառուցված Ս. Գրիգոր, կամ Կաթողիկե եկեղեցին՝ գմբեթավոր դահլիճ հորինվածքի հայկական նշանավոր հուշարձաններից մեկը։ Այս կառույցին անդրադարձել և համակողմանիորեն ուսումնասիրել են Ն. Մառը, Հովսեփ Օրբելին, Թորոս Թորամանյանը, Լ. Դուրնովոն, Ն. Տոկարսկին, Վ. Հարությունյանը, Բ. Առաքելյանը, Ս. Մնացականյանը, Ա. Երեմյանը և այլ մասնագետներ[34]։

1950-ական թթ. սկզբներին ճարտարապետ Վ. Մ. Հարությունյանի ղեկավարությամբ ձեռնարկվեցին Արուճի պալատական համալիրի պեղումները։ Եկեղեցուց մոտ 20 մետր դեպի հարավ, նրան զուգահեռ տեղադրությամբ, բացվել է պալատական դահլիճ, հյուսիսից սյունազարդ սրահով, իսկ հարավից՝ սենյակների շարքով[35] շրջափակված։ Ինչպես պարզել է Վ. Մ. Հարությունյանը, այս դահլիճն իր հատակագծով, ճարտարապետական մանրամասներով և չափերով (բացի արևելք-արևմուտք ձգվածության չափից), կրկնում է Դվինի VII

---

29 Գրիգոր Մամիկոնյանի կինը՝ Հեղինեն, հիշատակվում է որպես Հայոց թագուհի (դշխո), թեև տեղեկություններ չկան, որ ինքը՝ Գրիգոր Մամիկոնյանը կամ թե այլ հայոց իշխաններ կոչվեին արքա կամ թագավոր։

30 Մովսես Կաղանկատվացի, էջ 153։

31 Նույն տեղում, էջ 183։

32 Արշակունիների անկումից հետո նրանց տիրույթները, այդ թվում և Արագածոտնը, անցան Սասանյան արքայատոհմին որպես արքունի սեփականություն (Ղազար Փարպեցի, էջ 57—59։ Մովսես Խորենացի, էջ 307)։ Արաբական առաջին արշավանքներից հետո, երբ Հայաստանը դուրս եկավ պարսից գերիշխանությունից, Արշակունիների սեփական գավառները, ամենայն հավանականությամբ, մնացին Մամիկոնյաններին որպես ֆեոդալական սեփականություն՝ «դաստակերտ»։

33 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 91։

34 Н. Марр. Армянская церковь в Аруче.—Известия ИАК, вып. 12, СПб., 1904. В. Арутюнян. Указ. соч.; Նույնի՝ VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի հուշարձան, էջ 86—91։ Н. Токарский. Указ. соч., с. 38—72; Թ. Թորամանյան. Նշվ. աշխ., հ. I, էջ 352—353, հ. II, էջ 105 և հտ.։ Л. Дурново. Стенная живопись в Аруче.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), Երևան, 1952, № 1։ И. Орбели. Избранные труды. Ереван, 1963, с. 401—402; Б. Аракелян, В. Арутюнян, С. Мнацаканян. О некоторых вопросах истории армянской архитектуры. Ереван, 1969, с. 54, 98—106. Ա. Երեմյան. VII դարում հայկական հուշարձանների կրած փոփոխությունների մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 150—169։ Ա. Մանուչարյան. Քննություն Հայաստանի IV—XI դդ. շինարարական վկայագրերի. Երևան, 1977, էջ 100—102։ Ա. Շահինյան. Արուճի տաճարի շինարարական արձանագրությունը.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1971, № 1։ Կ. Մաթևոսյան. Արուճի տաճարի 666 թ. որմնանկարը.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1981, № 3, էջ 87—88։

35 Սյունազարդ դահլիճին կից սենյակները լրիվ չեն պեղվել։

դարի կաթողիկոսական պալատի գահադահլիճը[36]։ Եկեղեցուց մոտ 50—60 մետր դեպի հարավ-արևելք պեղումներով բացվել են մի այլ խումբ կառույցներ՝ արդեն նշված միանավ մատուռը (որը Վ. Հարությունյանն իրավամբ համարում է ավելի վաղ կառույց, քան պալատական համալիրը)[37] և վաղ միջնադարյան (IV—VI դդ.) քարակոթողների երկու պատվանդաններ[38]։ Այս մասում պեղվել է նաև ուշագրավ մի դահլիճ, որի կիրառական նշանակությունը չի պարզվել։ Վ. Մ. Հարությունյանը համոզիչ կերպով հերքում է այդ կառույցի եկեղեցի լինելը, ենթադրելով, որ «դահլիճը պատկանում է իշխան Գրիգոր Մամիկոնյանի պալատական կոմպլեքսին և ծառայել է ընդունելության կամ ունկնդրության նպատակների համար»։ Այն համաժամանակյա է սյունազարդ դահլիճին[39]։

Պատմիչների տեղեկություններից[40] և մասնագետների ուսումնասիրություններից[41] հայտնի է, որ պալատական համալիրներն ունեն գրեթե կանոնիկ լուծումներ և կառույցների որոշակի համակարգ՝ թելադրված նրանց գործնական բովանդակությամբ և պալատական նիստուկացով։ Այդ կառույցներից հայտնի են՝ գահադահլիճը (դահլիճ)՝ հանդիսավոր ընդունելությունների և պետական (կամ եկեղեցական) խորհրդի համար, տաճարը (սեղանատուն)՝ խրախճանքների և ընդունելության համար, սրահը, որը փաստորեն սպասասրահի դեր է կատարել, պալատական մատուռը կամ եկեղեցին, հրապարակը, որի վրա բացվել են եկեղեցին և պալատը, փողոցը՝ ծածկված, երդիկավոր միջանցք, որը միացրել է պալատի բնակելի և պաշտոնական մասերը, սենյակները (ննջարաններ), տները, որոնք կատարում են պահեստների կամ հատուկ նշանակության սենյակների դեր, ինչպես և պալատի բաղնիքը։ Հայաստանի տարածքում ուսումնասիրված վաղ միջնադարյան պալատներում (Դվինի IV դարի արքունական, Դվինի V և VII դդ., Ավանի և Զվարթնոցի կաթողիկոսական, Արուճի իշխանանիստ) առկա են վերը նշված կառույցները լրիվ կամ մասամբ, բայց որոշակի խմբավորումներով։

Արուճի պալատն իր չափերով, շուքով և ճարտարապետությամբ, ինչպես երևում է, պահպանել է վաղ միջնադարյան աշխարհիկ կառույցների համար մշակված կանոնները[42]։

Արուճում պեղված համալիրի արևելյան սյունազարդ դահլիճն իր բոլոր տվյալներով համապատասխանում է գահադահլիճի ֆունկցիաներին։ Այս դահլիճին հարավից կից սենյակները կրկնում են Դվինում բացված երկու կաթողիկոսական պալատների հատակաձևը, իսկ հյուսիսից կից սյունազարդ կառույցը, որը բացվում է եկեղեցու և ամենայն հավանականությամբ, պալատամերձ

36 Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 60—61 և աղյուսակ։ Նույնի՝ Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները (ըստ 1937—1939 թթ. պեղումների նյութերի). Երևան, 1950, էջ 56—80։

37 Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 60—61։

38 Արուճի եկեղեցու շրջակայքից հայտնաբերվել և այժմ եկեղեցու ներսում են պահվում վաղ միջնադարյան երկու քառակող կոթողներ, բեկորատված վիճակում։

39 Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 57—58։ Տե՛ս նաև Марио д'Онофрио. Указ. соч., с. 14.

40 Ագաթանղեղոս. Պատմություն հայոց. Երևան, 1977, էջ 79։ Փավստոս Բուզանդ, էջ 122։

41 Թ. Թորամանյան. նշվ. աշխ., հ. 1, էջ 355—357։ Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 62։ Ս. Մնացականյան. Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները. Երևան, 1971, էջ 233—235։ Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները. հ. 1, Երևան, 1952, էջ 95—117, 124։ Ս. Մնացականյան. Աղթամար. Երևան, 1983, էջ 22—33։

42 Թ. Թորամանյան. նշվ. աշխ., հ. 1, էջ 62։

հրապարակի կողմը[43], հիշեցնում է պատմիչների հիշատակած սրահը[44]։ Նման կառույցները Թ. Թորամանյանը սպասասրահ կամ նախասրահ է համարում. «...երեք կողմեն փակ՝ մեկ կողմեն բացությա և կամարակապ սյուներու վրա հարկածածուկ էր։ Այս ձևի սրահները սովորաբար արքունի հրապարակի որևէ մի կողմին վրա կգտնվեին, ուրկից անցնելով կմտնվեր ապարանքի այս կամ այն բաժանմունքը»[45]։ Դեպի հրապարակ ժողովրդի մուտք ունենալու պարա-



Նկ. 1



Նկ. 2

գայում բնական է, որ գահադահլիճը պետք է ինչ-որ ձևով բաժանված լիներ հրապարակից։ Միևնույն ժամանակ խուլ պատի առկայությունն էլ ցանկալի չէր հրապարակի ճարտարապետական լուծման տեսակետից, ինչը պետք է որ հանգեցրած լինի գահադահլիճին կից[46] սյունազարդ սպասասրահի առաջացմանը։

Վաղ միջնադարյան մի շարք պալատներում (Դվին, Ավան, Արուճ) գահադահլիճին կից կա սենյակների շարք՝ տեղադրված հրապարակի հակառակ կողմում, դրանով իսկ ասես շեշտված անմատչելիությամբ[47]։ Դվինում հայտ-

43 Այս մասում հրապարակի առկայությունը պետք է ենթադրել եկեղեցու և պալատի միջև գտնվող տափարակից (առանց VII—XI դդ. կառուցման հետքերի)։ Նման հրապարակ, որը բաց էր ժողովրդի համար և իր վրա էր կրում հոգևոր ու աշխարհիկ կարևորագույն կառույցները, հանդիպում է (իհարկե այլ մասշտաբի) դեռ Վաղարշապատում (Ագաթանգեղոս, էջ 80, 108)։ Նման հրապարակներ կան նաև Դվինում և Զվարթնոցում։

44 Марио д'Онофрио. Указ. соч., с. 14. Թեև հեղինակն այստեղ օգտագործում է «ատրիում» տերմինը, որը ներփակ բակի նշանակություն ունենալով բնավ չի համապատասխանում առկա հուշարձանի սյունազարդ սպասասրահի ֆունկցիային։

45 Թ. Թորամանյան. նշվ. աշխ., հ. 1, էջ 356։ Մեկ այլ տեղում Թորամանյանը գրում է, որ սրահը հիմնականում կից է լինում գահադահլիճին ծառայելով որպես սպասասրահ (էջ 357)։

46 Ավելի ուշ դարերում նման միտում նկատվում է եկեղեցական ճարտարապետության մեջ, ինչը արտահայտվում է բուն եկեղեցին հրապարակից անջրպետող գավիթի առաջացմամբ։

47 Միայն Դվինի VII դարի պալատում գահադահլիճը երկու կողմից է շրջապատված սենյակներով։

նաբերված հնագիտական նյութերը որոշակի ոչինչ չեն հուշում նրանց կիրառության վերաբերյալ[48]։ Կարելի է ենթադրել, որ Արուճի պալատում (ինչպես և մյուս պալատներում) այս սենյակները պալատական կիրառական նշանակություն ունեցող բաժանմունքների հետ այս կամ այն կերպ կապված «տներն» էին, ինչպես «տուն պատմուճականաց», «տուն հանդերձաց», դիվանատուն, դանձարան և այլն, որոնք հիշատակվում են պատմիչների կողմից[49]։

Այս առումով հետաքրքիր է Փավստոս Բուզանդի մի հիշատակությունը՝ Դղեկ մարդպետին սպանելու մասին. «...սակրավոր մարդիկ նրան շրջապատեցին, վեր բարձրացրին և այսպես տարան մինչև թագավորի սեղանատան դուռը։ Երբ թագավորը տեսավ, որ այնտեղ էին տանում՝ ասաց. «ոչ այստեղ, այլ տարեք դրան հանդերձատունը»։ Ապա ասպարակիր զինվորները նրա ձեռները ետևը կապելով, նրբանցքով տարան հանդերձարանը, այսինքն այնտեղ՝ որտեղ թագավորները թագ էին դնում»[50]։ Այս տեղեկությունից երևում է, որ հանդերձարանը պալատի պաշտոնական մասում էր գտնվում և «փողոցով» (միջանցքով) բաժանված էր սեղանատնից («տաճարից»), որը պետք է գտնվեր պալատի բնակելի մասում կամ լիներ առանձին (ինչպես Աղթամարի պալատում)[51]։ Հնարավոր է ենթադրել, որ արքայական պալատին բնորոշ այս տեղադրությունը կիրառվեր նաև արքայական շուքի ձգտող Գրիգոր Մամիկոնյանի «արքունիք»[52] կոչված պալատում։ Կարելի է ենթադրել, որ վերը նշված կառույցների խումբը կազմում է Արուճի պալատի պաշտոնական հարկաբաժիններից առայժմ հայտնաբերվածը։ Ենթադրում ենք, որ հայտնաբերված մյուս կառույցները պետք է խմբավորվեն որպես պալատի ոչ պաշտոնական առօրյայի հետ կապված հարկաբաժիններ, հնարավոր է, պաշտոնական մասից բաժանված «փողոցով» (միջանցք)։ Վերոհիշյալ խմբի մեջ հավանորեն մտել է արդեն նշված միանավ մատուռը, վերածված պալատական եկեղեցու։ Նման օրինակ կա նաև Զվարթնոցի կաթողիկոսական պալատում, որտեղ որպես պալատական եկեղեցի է ծառայել նույնպես IV—VI դդ. մի մատուռ[53], այն տարբերությամբ, որ Զվարթնոցում մատուռը ձևափոխվել է և հարմարեցվել կառույցի մեջ, իսկ Արուճում անձեռնմխելի և առանձնացված է մնացել, հավանորեն դիմացը փոքրիկ բակով, քանի որ, ինչպես նշվել է, մատուռին անմիջապես կից, 0,7 և 1,5 մետր հեռավորությամբ, երկու համաժամանակյա կոթողների պատվանդաններ են հայտնաբերվել[54]։

Պալատական համալիրի այս խմբի մյուս կառույցը՝ քառամույթ, հաստ պատերով դահլիճը, հետագա դարերում ամենից ավելի է փոփոխություններ կրել (ավելացել են արևելյան մուտքի կողքի բրգաձև հավելվածները, փակվել է արևմտյան մուտքը, սալարկը տեղ-տեղ կրկնակի է, իսկ հյուսիս-արևելյան անկյունում ջրամբար է կառուցվել) և սա է պատճառներից, մեկը, որ դժվարացրել է նրա նշանակության պարզաբանումը։ Մյուս պատճառն այն է, որ դուգահեռներ չունի միջնադարյան Հայաստանի հայտնի կառույցներում։ Դահլիճանման այս շինությունն ունի 18,7×10,7 մ ներքին չափեր (արտաքին չափերը անհնար է որոշել՝ ուշ հավելվածների պատճառով), երեք մուտքը՝ արևելքից, արևմուտքից և հյուսիսից։ Հյուսիսայինը, որն ի սկզբանե ամենանեղն է եղել, հետագա վերակառուցումների ժամանակ վերածվել է լուսամուտի, արևմտյան մուտքը լրիվ փակվել է, իսկ արևելյանը, որն ունեցել է 210 սմ լայնություն, նեղացվել է՝ ձևափոխված կառույցի պաշտպանական ֆունկցիային համապատասխան։

---

48 Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 120։

49 Փավստոս Բուզանդ, էջ 249։

50 Նույն տեղում։

51 Թ. Թորամանյան. նշվ. աշխ., հ. 1, էջ 356։

52 Մովսես Կաղանկատվացի, էջ 153։

53 Թ. Թորամանյան. նշվ. աշխ., հ. 1, էջ 358, հ. 2, էջ 23։ Ս. Մնացականյան. Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, էջ 232։

54 Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 59։

Վ. Հարությունյանը բացառում է սրա գմբեթավոր կառուցվածք լինելը և համոզիչ ապացույցներ է բերում դահլիճի թաղածածկ լինելու մասին[55]։ Լուսավորումը ենթադրվում է վերևից, քանի որ բավական մեծ բարձրությամբ պահպանված պատերին լուսամուտներ չկան։

Շինությունը կանգնած է երկաստիճան գետնախարիսխի վրա, որը շեշտում է նրա մեկուսացվածությունը։ Հնարավոր է ենթադրել, որ սա սկզբնաղբյուրներում այնքան հաճախ հիշատակվող պալատական համալիրի սեղանատունը («տաճար») լինի։ Այս կառույցում առկա են «տաճարին» բնորոշ որոշ առանձնահատկություններ. միջավայրը՝ դահլիճը գտնվում է պալատական համալիրի ոչ պաշտոնական մասում, սակայն որոշակիորեն առանձնացված է և հանդիսավոր, ինչը կարող էր թելադրված լինել թե՛ ամենօրյա գործածության և թե՛ հանդիսավոր արարողություններին, ճաշկերույթներին ծառայելու հանգամանքով. ճարտարապետական առանձնահատկությունները՝ դահլիճի թաղակապ ծածկը, պատերի որմնամույթերով առաջացող խորշերը, բազմաթիվ դռները (որոնցից երկուսը՝ արևելյանն ու արևմտյանը, հավանորեն երկփեղկ)[56], շինվածքի մոնումենտալությունը և, միևնույն ժամանակ, ներքուստ ստեղծվող բավական ինտիմ միջավայրը (որը կարող էր լրացվել լուսավորման էֆեկտներով և ներքին հարդարանքի տարրերով) և, վերջապես, դիրքը եկեղեցուց և հրապարակից (որպես մարդաշատ վայրեր) բավական հեռու և այլ կառույցներով փակված լինելը, ինչը, սակայն, չի խանգարում դեպի արևելք և հյուսիս-արևելք բաց տեսարան ունենալուն (բուն ավանը դեպի այս կողմ տարածված չէր)։

Կարելի է ենթադրել, որ Արուճի պալատական համալիրի որոշ կառույցներ, թե՛ պաշտոնական և թե՛ ոչ պաշտոնական (բնակելի) հարկաբաժիններից, դեռևս հողով են ծածկված[57]։

Արուճի եկեղեցուց և պալատական համալիրից մոտ 80—100 մետր դեպի հյուսիս, հյուսիս-արևելք, Երևան—Լենինական հին ավտոճանապարհի մոտ, 1983 թ. կատարվող հողային աշխատանքների ընթացքում բացվեց ջարդված քարե (տուֆ) մի սարկոֆագ, եռանկյունաձև հատվածքի ծածկասալով (տե՛ս նկ. 1)։ Կատարված հետախուզական պեղումներ[58] պարզեցին, որ այս տարածքում միջնադարյան գերեզմանոց է եղել։ Պեղվեցին ևս մեկ քարե ամբողջական սարկոֆագ, եռանկյունաձև հատվածքի ծածկասալով (նկ. 2) և մեկ հիմնահողային թաղում, ծածկված հարթ ծածկասալով։ Բոլոր դեպքերում հնագիտական նյութը բացակայում էր։ Ուղղվածությունը արևելք-արևմուտք է (դլուխը դեպի արևմուտք)։ Կմախքը մեջքի վրա է պառկած, ձգված վիճակում, ձեռքերը կրծքին խաչած։ Գրունտային ջրերից թաղվածների ոսկորները քայքայված էին։ Սարկոֆագները և ծածկասալերը զանգվածեղ են, սակայն կատարված քարի բարձրորակ մշակումով։ Սարկոֆագներից մեկի փորվածքը անտրոպոմորֆ է, մյուսը՝ ուղղանկյուն։ Նյութը, ձևը, մշակումը, կողմնորոշումը, թաղման ձևը, ինչպես նաև Հայաստանում հայտնի զուգահեռները (Ջրվեժ[59], Լմպատավանք)[60] թույլ են տալիս սարկոֆագները և ողջ գերեզմանոցը թվագրել վաղ միջնադարով (IV—VII դդ.)։ Գերեզմանոցի թվագրմամբ մասամբ պարզվում է Արուճ բնակավայրի հյուսիսային սահմանագիծը ուսումնասիրվող ժամանակաշրջանում։

---

55 Նույն տեղում, էջ 58։

56 Թ. Թորամանյան. նշվ աշխ., հ. 1, էջ 353—354։ Հեղինակը նշում է նման դռների առկայությունը հայկական միջնադարյան պալատներում։

57 Վ. Հարությունյան. VII դ. աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 57։

58 1983 թ. հետո Արուճի պեղումները կատարվում են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից։

59 Ըստ Ջրվեժում համանման սարկոֆագներ պեղած Ա. Ժամկոչյանի բանավոր վկայության։

60 Նման սարկոֆագներ՝ անտրոպոմորֆ հանվածքով, հայտնաբերվել են Լմպատավանքի (Արթիկի շրջան, VI դար) հիմքերի մոտ, եկեղեցու մաքրման աշխատանքների ընթացքում։

РАННЕСРЕДНЕВЕКОВЫЕ ПАМЯТНИКИ АРУЧА

Б. Л. САДОЯН

Резюме

На основе сопоставительного археологического, архитектурного и источниковедческого анализа в статье рассматривается вопрос о времени строительства недавно раскопанного крепостного сооружения в Аруче. Мы приходим к выводу, что это сооружение было возведено в III—IV вв. Аршакидами и служило зимними квартирами царским войскам. В статье также делается попытка определить функциональное назначение некоторых строений аручского дворцового комплекса VII в., раскопанного в 50-х гг. В. М. Арутюняном.